

# Մաթեմատիկայի հանրապետական օլիմպիադա

23 մարտի 2019

5-րդ դասարան, տևողությունը՝ 120 ր

Աշակերտի անուն, ազգանուն՝ \_\_\_\_\_

Դպրոց՝ \_\_\_\_\_

1. Եթե 51-ի բազմապատիկ թվի  $1/3$  մասը բաժանենք այդ նույն թվի  $1/17$  մասին, ապա մնացորդում կստացվի 100: Գտնել այդ թիվը:

**Պատասխան՝ 2550**

2. Արամը և Անին սովորում են նույն դասարանում, որտեղ տղաները 2 անգամ շատ են աղջիկներից: Արամի դասընկերները 8-ով շատ են դասընկերուհիներից: Քանի՞ դասընկերուհի ունի Անին:

**Պատասխան՝ 8**

3. Քանի՞ հնգանիշ թիվ կա, որի թվանշանների գումարը հավասար է 3-ի:

**Պատասխան՝ 15**

4. Գրատախտակին գրված է 100 թիվը: Նարեկը ամեն քայլում ջնջում է գրատախտակի վրա գրված թիվը՝ փոխարենը գրելով այդ թվից 2-ով պակաս, կամ նրանից երկու անգամ փոքր բնական թիվ: Ամենաքիչը քանի՞ քայլ հետո Նարեկը գրատախտակին կստանա 1 թիվը:

**Պատասխան՝ 7**

5. Գտնել A, B, C, D թվերը, եթե  $AAAA+BBB+CC+D=10512$  և տարբեր տառերին համապատասխանում են տարբեր թվանշաններ:

**Պատասխան՝ A=9      B=4      C=6      D=3**


6. Գրատախտակին գրված են 0-ից 9-ը բոլոր թվանշանները: Արամը ջնջում է նրանցից որևէ երկուսը և փոխարենը գրում է նրանց գումարից 1-ով մեծ թիվ: Այդ գործողությունը շարունակում է մինչև գրատախտակին գրված է լինում մեկ թիվ: Ո՞րն է այդ թիվը:

**Պատասխան՝ 54**

7. 1-ից մինչև 100 թվերի մեջ քանի՞ թիվ կա որոնք բաժանվում են 2 կամ 3 թվերից արևվազն մեկի վրա:

### Պատասխան՝ 67

8. Քառակուսին բաժանված է 4 ուղղանկյունների /տես նկարը/, որոնց պարագծերի գումարը 120սմ է:  
Գտնել քառակուսու մակերեսը:



### Պատասխան՝ 225

9. Գտնել  $x88y$  տեսքի քառանիշ թվերի քանակը, որոնք բաժանվում են 15-ի:

### Պատասխան՝ 6

10. Տրակտորը մեկ օրում կարող է վարել 6 հա, կամ ցանել 9 հա: Տասը օրում տրակտորը քանի՞ հեկտար կարող է վարել և վարածը ցանել:

### Պատասխան՝ 36

**Ուշադրություն:** Յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է **1** միավոր: